

Խառը թվեր: Խառը թվերի համեմատում/մաս 2

Բնական թվերի և կանոնավոր կոտորակների գումարը կոչվում է խառը թիվ: Խառը թվի գրառմանական մեջ եղած բնական թիվը կոչվում է խառը թվի ամբողջ մաս, իսկ կոտորակը՝ կոտորակային մաս:

Օրինակ՝

$2\frac{3}{5}$ -ը խառը թիվ է, 2-ը ամբողջ մասն է, իսկ $\frac{3}{5}$ -ը կոտորակային: Կարդացվում է՝ երկու ամբողջ երեք հինգերորդ:

$$2\frac{3}{5}=2+\frac{3}{5}$$

Անկանոն կոտորակը գրենք խառը թվի տեսքով.

$$19:2=9(1\text{մն.})$$

$$\frac{19}{2}=9\frac{1}{2}$$

Խառը թիվը գրենք անկանոն կոտորակի տեսքով.

$$4\frac{1}{2}=\frac{4\cdot 2+1}{2}=\frac{9}{2}$$

Եթե խառը թվերի ամբողջ մասերը տարբեր են, ապա ավելի մեծ է այն խառը թիվը, որի ամբողջ մասն ավելի մեծ է:

Օրինակ՝

$$4\frac{7}{12}<5\frac{1}{12}, \text{ քանի որ } 4<5$$

Եթե խառը թվերի ամբողջ մասերը նույնն են, ապա ավելի մեծ է այն խառը թիվը, որի կոտորակային մասն ավելի մեծ է:

Օրինակ՝

$$4\frac{7}{12}>4\frac{1}{12}, \text{ քանի որ } 4=4 \text{ և } \frac{7}{12}>\frac{1}{12}$$

Առաջադրանքներ

- Խառը թիվը ներկայացրեք բնական թվի և կանոնավոր կոտորակների գումարի տեսքով.

Օրինակ՝ $2\frac{3}{5}=2+\frac{3}{5}$

$$16\frac{2}{7}$$

$$156\frac{6}{11}$$

$$60\frac{21}{34}$$

$$210\frac{15}{121}$$

$$18\frac{27}{119}$$

- Թվերի գումարը գրի առեք խառը թվի տեսքով.

Օրինակ՝ $4+\frac{1}{5} = 4\frac{1}{5}$

$$322+\frac{7}{19}$$

$$87+\frac{17}{35}$$

$$128+\frac{131}{456}$$

$$109+\frac{19}{116}$$

- Անկանոն կոտորակը գրենք խառը թվի տեսքով.

Օրինակ՝ $19:2=9(1\text{մն.})$

$$\frac{19}{2}=9\frac{1}{2}$$

$$\frac{34}{5}$$

$$\frac{81}{4}$$

$$\frac{21}{8}$$

- Խառը թիվը գրենք անկանոն կոտորակի տեսքով.

Օրինակ՝ $4\frac{1}{2} = \frac{4 \cdot 2 + 1}{2} = \frac{9}{2}$

$$11\frac{3}{10}$$

$$4\frac{9}{20}$$

$$2\frac{8}{25}$$

$$30\frac{17}{21}$$

- Համեմատեք կոտորակները

$$14\frac{1}{3} \text{ և } 7\frac{1}{2}$$

$$120\frac{5}{24} \text{ և } 120\frac{1}{2}$$

$$2\frac{1}{30} \text{ և } 2\frac{1}{30}$$

$$51\frac{15}{28} \text{ և } 51\frac{3}{20}$$

$$23\frac{5}{8} \text{ և } 10\frac{1}{2}$$

$$18\frac{7}{8} \text{ և } 18\frac{2}{7}$$

$$30\frac{5}{16} \text{ u } 50\frac{1}{5}$$

$$14\frac{3}{25} \text{ u } 14\frac{3}{4}$$

$$8\frac{2}{3} \text{ u } 18\frac{2}{5}$$

$$3\frac{5}{22} \text{ u } 14\frac{3}{41}$$